ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ . «ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱՐԱՎՈՐՆ ԱՆՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻՈՒՄ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եղավ Քվեմո Քարթլիի տարածաշրջանում եւ այնտեղ անցկացրեց «Ուժեղ տարածաշրջան -ուժեղ Վրաստան » նախագծի շնորհանդեսը:

Մինչ այդ, վարչապետը Ռուսթավիում հանդիպում ունեցավ տարածաշրջանային վարչության, մունիցիպալիտետների ղեկավարների հետ: Հանդիպմանը մունիցիպալիտետների ղեկավարները վարչապետին տեղեկատվություն ներկայացրին երկրամասում իրականացվող նախագծերի ընթացքի եւ իրականացվելիք աշխատանքների մասին:
Մառնեուլիում, տեղի գործարարների հետ հանդիպմանը, Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ նոր նախագծի գլխավոր նպատակը երկրի տարածաշրջանների ռազմավարական եւ տնտեսական զարգացման ապահովումն է:
«Հարկ է արդյունավետ քայլեր կատարել տարածաշրջանների զարգացման ուղղությամբ: Դրան կհետեւի տեղի բնակչության զբաղվածության հարցի կարգավորումն ու արտադրությունների վերականգնումը»,-հայտարարեց վարչապետը:
Նրա խոսքերով, Քվեմո Քարթլիում նշանակալի աշխատանքներ են իրականացվել: Միայն անցյալ տարվա ընթացքում իրականացվել է 47 միլիոն դոլարի անմիջական ներդրում: Ներդրումները հիմնականում իրականացվել են վերամշակող արդյունաբերության, լեռնարդյունաբերության, էներգետիկայի, անշարժ գույքի, տրանսպորտի եւ կապի ոլորտներում:
Վարչապետի հավաստմամբ, իշխանությունները առանձնակի ուշադրություն են հատկացնում կրթական ոլորտին, մասնավորապես՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին պետական լեզվի ուսուցման ծրագրին:
«Քվեմո Քարթլիում վերանորոգվել է 119 դպրոց, կառուցվել երկու նոր դպրոց, վերականգնվել է մասնագիտական ուսումնարանը: Կրթօջախների վերանորոգման աշխատանքներն այս տարի կշարունակվեն:
Ընթացիկ տարվա համար ծրագրում ենք վերանորոգել 40 դպրոց, կառուցել նոր դպրոց, նախագծման փուլում է Մառնեուլիի թիվ 1 դպրոցի նոր շենքը: Մենք մանրամասն ուսումնասիրում ենք տարածաշրջանի դպրոցների վիճակը, որպեսզի հստակորեն իմանանք, թե որոնք ունեն վերանորոգման կարիք:
Այսօր կառավարությունը հնարավոր ամեն ինչ անում է, որպեսզի ազգային փոքրամասնությունները կարողանան իրացնել իրենց հնարավորությունները եւ ինտեգրվեն վրաց հասարակությանը: Այդ նպատակով, երիտասարդության համար մշակել ենք հատուկ ծրագիր: Ծրագրի նպատակն է վրաց լեզվի ուսուցումը: Դա արդի չափորոշիչներով հետաքրքիր ծրագիր է, որի շնորհիվ Քվեմո Քարթլիում բնակվող ազգային փոքրամասնությունները կարողանան օնլայն ռեժիմով անվճար տիրապետել պետական լեզվին: Դա, իրոք, հիանալի հնարավորություն է կրթական մակարդակի բարձրացման եւ պետական լեզվի ուսուցման աջակցության համար»,- հայտարարեց վարչապետը:

1 / 1